


3299



1932

ԾՐԱԳԻՔ - ԿԱՆԱՆԿԱՆ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ «ԵՓՐԱԾ»

ՄԻՌԻԹԵԱՆ

ՀԻՄՆԵԱԼ


10 ՅՈՒՆՈՒԱՐ 1932

Հ. Ա. Լ. Ե. Պ

Հ. Ա. Լ. Ե. Պ

Բ 2001

2010



մ. Մարտի, ԽԱՆՏԵՐ, ՀԱԼԵՄ

ՅԿՄ  
Հ-94



ԾԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՑ «ԵՓՐԱՏ», ՄԻՈՒԹԵԱՆ

### ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յօդ 1.— Հալէպի մէջ հիմնուած է 10 Յունիքար 1932 ին Միութիւն մը, որ կը կոչուի ՀՅՅ երիտասարդուց «ԵՓՐԱՏ» ՍԿՈՒՄԲ:

### ՆՊԱՏԱԿ

Յօդ. 2.— Միութեան նպատակն է, առաջնորդել Հայ երիտասարդները դէպի բարոյական ֆիզիքական եւ մտաւոր զարգացում, դաստիարակել ազգային ողիով, պատրաստել զանոնք սիւրիահպատակ պատուաւոր քաղաքացիներ, աշխատիլ վառ պահել հայրենիքի սէրը եւ հայ տոհմային ազնիւ աւանդութիւնները, սատարել երիտասարդ չքաւոր ուսանողներու եւ արհեստաւորներու, կատարելագործելու համար իրենց ուսումը կամ արհեստը:

### ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Յօդ. 3.— Հայ երիտասարդաց «Եփրատ» Միութեան կընան անդամակցիլ, 18—28 տարեկան պատուաւոր ամէն հայ երիտասարդներ, որոնք կ'ընդունին ներկայ Ծրագիր-Կանոնագիրը եւ կ'ենթարկուին Միութեան որոշումներուն:

Յօդ. 4.— Անոնք՝ որոնք նմանորինակ ուրիշ Միութեան մը անդամ չին:

Յօդ. 5.—Միութեան անդամ արձանագրուելու համար՝ անհրաժեշտ է երկտողով մը իմացնել Վարչութեան իր անդամակցելու փափաքը, խնդրագրին հետ միացնելով երկու անդամներու բարոյական երաշխաւորագիրը:

Յօդ. 6.—Վարչութիւնը իրաւասու է ոեւէ անդամակցութեան դիմումնագիր ընդունելու եւ կամ մերժելու:

Յօդ. 7.—Անդամները պարտին իրենց կարողութեան չափով օժանդակել Միութեան տեղական ծախքերու հայթայթման համար, նիւթապէս եւ բարոյապէս:

Յօդ. 8.—Միութեան մէջ ընդունուած նոր անդամ մը, 6 ամիս վերջ միայն Վարչութեան ընտրուելու իրաւունք կ'ունենայ:

Յօդ. 9.—Ամէն անդամ պարտի յարգել կարգավահութեան եւ գաղտնապահութեան ըսկզբունքները եւ սիրայօժար ընդունիլու կատարել Վարչութեան կողմէ իրենց յանձնուած պարտականութիւններն ու պաշտօնները:

### ՄՈՒՏՔԻ ՏՈՒՐՔ ԵՒ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ

Յօդ. 10.—Միութեան ամէն անդամ, իր ընդունելութեան ժամանակ, պարտաւոր է վճարել մուտքի տուրք մը որուն քանակը ինքառագատ է որոշելու, իսկ անդամավճարը ամիսը նուազագոյն 10 Ս. դնէ. Է, իսկ այն անդամները որոնց նիւթական անձնութիւնը կը հաստատէ Վարչութիւնը, գերազանցամբ մէնարէ:

Յօդ. 11.—Միութիւնը վերոյիշմալ նպա-



տակները իրագործելու համար պիտի դիմէ հետեւեալ միջոցներուն, առաջադրած նպատակին հասնելու համար:

Ա..—Կ'ունենայ սեփական գրադարան մը:

Բ.—Կը սարքէ բարոյացուցիչ ներկայացումներ, ցերեկոյթներ եւ երեկոյթներ:

Գ.—Ընդհանուրի համար կը սարքէ, օգտակար դասախոսութիւններ:

Դ.—Ի հարկին կ'օգտագործէ «Եփրատ» թերթը:

Ե.—Կը կազմէ մարմնամարզական եւ զեղարուհատական կազմակերպութիւններ:

Զ.—Միութիւնը իր նպատակին հասնելու համար կը դիմէ վերին մարմնին սատարելու համար իր նիւթական օժանդակութիւնով:

### ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՍՈՅՑՑՆԵՐԸ

Յօդ. 12.—Միութեան հասոյթները կը կազմեն:

Ա.—Մուտքի տուրքերը:

Բ.—Ամսավճարները:

Գ.—Ինքնակամ նուիրատուութիւնները:

Դ.—Ներկայացման, երեկոյթի վիճակահանութեան եւ դասախոսութեան հասոյթները:

Ե.—Գրադարանի հասոյթները:

Զ.—Միութեան Վարչութեան կողմէ ստեղծուած որիշ ոեւէ հասոյթի աղբիւրներ:

### ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 13.—Միութեան ամբողջ անդամներու համախմբումով գումարուած ժողովը կը կոչուի անդամական Ընդհ. ժողով:

Յօդ. 14.— Առնուազն երկու ամիսը անգամ  
մը տեղի կ'ունենայ անդամական կանոնաւոր  
ժողով, որուն հրաւէրը գրաւորապէս կամ մա-  
մուլի միջոցաւ կը հաղորդուի բոլոր անդամնե-  
րուն, ժողովէն առնուազն 2 օր առաջ:

Յօդ. 15.— Անդամական Ընդհ. Ժողովը տե-  
ղի կ'ունենայ Վարչութեան հրաւէրով:

Յօդ. 16.— Անդամական Ընդհ. Ժողովը օ-  
րինաւոր կը նկատուի, երբ անդամներուն կէ-  
սէն մէկ աւելին ներկայ է:

Յօդ. 17.— Երբ առաջին հրաւէրով ժողովը  
մեծամասնութիւն չ'կազմէ, Վարչութիւնը  
պէտք է յաջորդ շաբաթ երկրորդ հրաւէր մը  
ուղղէ նոյն օրակարգով: Երկրորդ ժողովին  
ներկաներուն թիւը օրինաւոր կը նկատուի, ինչ  
որ ալ ըլլայ ներկաներու թիւը, եւ տրուած ո-  
րոշումները պարտաւորիչ են բոլոր անդամնե-  
րուն համար:

Յօդ. 18.— Մյն անդամը, որ առանց մասնաւոր  
պատճառի երեք անգամ անդամական Ընդ-  
հանուր ժողովէն կը բացակայի, հրաժարած  
կը նկատուի:

Յօդ. 19.— Անդամական Ընդհ. Ժողովը  
կ'ընտրէ Վարչութիւնը:

Յօդ. 20.— Անդամական Ընդհ. Ժողովը  
Վարչութեան գործունէութեան հսկող եւ հա-  
մարասու գերազոյն մարմինն է:

Յօդ. 21.— Անդամական Ընդհ. Ժողովը կ'ըն-  
տրէ իր դիւանը 6 ամիս շրջանով:

Յօդ. 22.— Բացառիկ անդամական Ընդհ.  
Ժողով կարելի է գումարել՝

Ա. — Եթէ Վարչութիւնը յարմար դատէ:

Բ. — Եթէ անդամներուն  $\frac{1}{4}$ ը գրաւոր դի-  
մում ներկայացնէ:

### ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 23.— Վարչութիւնը Միութեան ըն-  
թացիկ գործերը վարող մարմինն է, եւ կը բաղ-  
կանայ 7 անդամներէ:

Յօդ. 24.— Վարչութիւնը կ'ընտրուի ան-  
դամական Ընդհ. Ժողովոյ ներկաներուն մեծա-  
մասնութեամբ եւ գաղտնի քուէարկութեամբ:

Յօդ. 25.— Վարչութեան պաշտօնավարու-  
թեան շրջանը 6 ամիս է, վերընտրելի ըլլա-  
լու իրաւունքով:

Յօդ. 26.— Եթէ Վարչութիւնը իր պայմա-  
նաժամը լրանալէ առաջ, մասնակի կամ թէ  
մեծամասնութիւնը կորսնցնէ, Անդամական  
Ընդհ. Ժողով գումարուելով նորերը կ'ընտրէ  
պակսուածներուն տեղ:

Յօդ. 27.— Անդամներուն մեծամասնու-  
թեան անվատահութեան պարագային Անդամա-  
կան Ընդհ. Ժողովը իրաւասու է լուծել Վարչու-  
թիւնը:

Յօդ. 28.— Վարչութիւնը շաբաթը առ  
նուազն անգամ մը նիստ կը գումարէ եւ կ'գ-  
բաղի Միութեան բոլոր գործերով:

Յօդ. 29.— Եթէ Վարչական անդամներէն  
մէկը երեք անգամ յաջորդաբար եւ առանց  
բանաւոր պատճառի ժողովներէն կը բացակայի,  
հրաժարած կը նկատուի

Յօդ. 30.— Վարչութիւնը կ'ընտրէ իր դի-  
ւանը, որ կը բաղկանայ, Ստենագետէ, Ստենա-  
գպերէ, Գանձապահէ եւ չորս խորհրդականէ:

Յօդ. 31.— Ստենապետը պարտականութիւն ունի Վարչական ժողովները բանալու, կանոնաւորութեան հսկելու, պաշտօնական թղթակցութիւնները Ստենադպիրին հետ բանալու եւ կարդալու:

Յօդ. 32.— Ստենադպիրին պարտականութիւնն է թղթակցութիւնները կատարել, ժողովին ատենագրութիւնները խնամքով արձանագրել, նաեւ թղթակցութիւնները, յարաբերական եւ հաշուական գրութիւնները պահել, մասնաւոր պահարաններու մէջ:

Յօդ. 33.— Դանձապահին պարտականութիւնն է; փոխան ընկալագրի գումարներ ստանալ եւ տալ, դրամի ոեւէ առաքում կամ յանձնում ու ծախք պէտք է հաստատուած ըլլայ Վարչութեան կողմէ:

Յօդ. 34.— Վարչութիւնը պարտաւոր է 3 ամիսը անգամ մը Անդամական Ընդհ. ժողովին ներկայացնիլ իր նիւթական եւ բարոյական գործառնութիւնները, եւ առ այդ վաւերացնել տալ:

Յօդ. 35.— Վարչութիւնը կ'ընտրէ նաեւ հետեւալ Յանձնախումբերը եւ կը հսկէ անոնց գործունէութեան վրայ

Ա.— Դրադարանի

Բ.— Թատերական եւ Գեղարուեստական

Գ.— Դասախոսական

Դ.— Մարզանքի

Ե.— Բորբականտի

Յօդ. 36.— Գրադարանի Յանձնախումբին պարտականութիւնն է՝ ա) Միութեան տրամա-

դրելի միջոցներով ճոխացնել գրադարանի գիրքերը, բ) յատուկ կանոնագրով մը զարկ տալ ընթերցամիրութեան, գ) հսկել գրքերու խնամքով պահպանման, դ) երկու ամիսը անգամ մը գրադարանի վիճակի մասին տեղեկագիր տալու է վարչութեան:

Յօդ. 37.— Թատերական, գեղարուեստական եւ դասախոսական Յանձնախումբերուն պարտականութիւններն են, սարքել ներկայացները, գեղարուեստական եւ ընկերային երեկոյթներ եւ դասախոսական ու վիճաբանական երեկոյթներ:

Յօդ. 38.— Մարզանքի Յանձնախումբին պարտականութիւնն է զբաղիլ Միութեան մարզական գործով:

Յօդ. 39.— Բորբականտի Յանձնախումբին պարտականութիւնն է, զանալ նոր անդամներ արձանագրել Միութեան, եւ աշխատիլ Միութեան յառաջացման, յանցանքի մէջ բռնել Միութեան անգաղտնապահ անդամները եւ խմացնել Վարչութեան:

### ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

Յօդ. 40.— Միութեան հանդէպ յանցաւոր կը նկատուին այն անդամները՝ որոնք

Ա.— Մրագիր կանոնագրի հակառակ ընթացքի մէջ կը գտնուին:

Բ.— Յահախակի կը բացակային ժողովները է:

Գ.— Զին կատարելու իրենց տրուած պարտականութիւնները:

Դ.— Զորս ամիսներ ամսական չեն վճա-

լեր:

Ե.— Կ'իւրացնեն Միութեան դրամը կամ  
գոյքը:

Զ.— Միութիւնը վարկաբեկող արարքի  
մէջ կը գտնուին:

Ե.— Երբ Միութեան զաղտնիքները կը  
յայտնեն նմանօրինակ գետնի վրայ կազմուած  
Միութիւններու:

Յօդ. 41.— Յանցաւոր նկատուած անդամ  
մը, Վարչութեան կողմէ կ'ստանայ դիտողու-  
թիւն եւ յանդիմանութիւն, աւելի ծանր յանցան-  
քի պարագային Վարչութիւնը կը կախակայէ  
խնդրոյ առարկայ եղող անդամը եւ խնդիրը  
կը յանձնէ Սնդամական Ընդհ. Ժողովի նկա-  
տառման:

Յօդ. 42.— Ոեւէ յանցաւոր նկատուած ան-  
դամի մը վերջնական արտաքսման որոշումը  
կը տրուի Սնդամական Ընդհ. Ժողովոյ կողմէ:

### ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄ

Յօդ. 43.— Հայ եղիտասարդաց «Եփրատ»  
Միութիւնը լուծուած կը նկատուի, եթէ իր ան-  
դամներուն թիւը 10 էն պակաս ըլլայ:

Յօդ. 44.— Լուծուելու պարագային իր գոյ-  
քերը ու դրամները կը յանձնուին զինք հովա-  
նաւորող հիմնադիր անդամներուն:

### ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 45.— Վերոյիշեալ Մրագիր կանոնա-  
գիրը վոփոխելի է, երբ Սնդամական Ընդհ.  
Ժողովի անդամներու 2/3-ը հաւանաթիւն կը  
յայտնէ:



2013

ՀՀ Ազգային գրադարան



0796 NL0036786

chart

